DOI: 10.54503/1829-4324.2023.1-365

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լիանա Կառլենի Հարությունյան

Հոդվածը ստացվել է՝ 22.02.23, ուղարկվել է գրախոսման՝ 14.03.23, երաշխավորվել է տպագրության՝ 08.05.23

Ներածություն: Հայտնի ֆրանսիացի պատմաբան Ֆերնան Բրոդելը, խոսելով կապիտալիզմի ծնունդի մասին մերժում է շատերի կողմից առաջ քաշած այն տեսակետը, թե վերջինս պայմանավորված է հրեաների ձեռնարկատիրական ոգով, և ընդգծում հայերի ունեցած դերը աշխարհի առևտրական քարտեզում[1]: Եվ ոչ պատահականորեն:

2023 թվականին «Մանթաշյանց գործարարների միության» նախաձեռնությամբ վերահրատակվել է Վահան Բայբուրդյանի «Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում» աշխատությունը, հիշեցնելու բոլորիս, թե ինչ ահռելի դեր են ունեցել հայերը աշխարհի տարբեր ծայրերում առևտրատնտեսական և մշակութային հարաբերությունների զարգացման հարցում: Հեղինակը շրջանառության մեջ դնելով բազում օտարալեզու և թե հայ հեղինակների աշխատությունները վեր է հանել անհամար փաստեր՝ հաստատելու հայերի ծանրակշիռ դերը ոչ միայն նյութական և մտավոր մշակույթի, այլև իրավա-քաղաքական դաշտում: Նշված աշխատությունը ոչ միայն ներկայացնում է փաստեր, այլև նախանշում է ուղիներ, հուշում օգտվելու պատմության դասերից: Չէ որ եթե նախկինում հայ վաճառականները, ամենուր վայելելով անբասիր հեղինակություն, կարողացել են ստեղծել ժամանակաշրջանի ամենանշանավոր առևտրական համաշխարհային ցանցերից մեկը և գործել համատեղ, ապա ներկայում,– ինչպես նկատում է Ա.Բայբուրդյանը, – երբ հայերը սփռված են գրեթե ողջ աշխարհով, երբ տեխնիկական հնարավորությունները բոլորովին այլ են, պետք է գիտակցել, որ ստեղծելով ցանցային համակարգ դա առավել քան հնարավոր է[2]: Վերը նշվածը **արդիական է** դարձնում Վահան Բայբուրդյանի աշխատության քննական տեսությունը (обозрение):

Խնդիր է դրվել ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի հայ վաճառականների գործունեությունը աշխարհի տարբեր գաղթօջախներում, վեր հանել այն էթիկական և բարոյական սկզբունքները, որով նրանք առաջնորդվել են՝ ապահովելով իրենց ուրույն տեղը համաշխարհային առևտրի հորձանուտում:

Գրականության վերլուծություն: Համաշխարհային առևտրում հայ վաճառականության դերին անդրադարձել են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի տարբեր հեղինակներ՝ Կոստանդ Ջուղայեցին, Թովմա Վանանդեցին, Առաքել Դավրիժեցի, Զաքարիա Ագուլեցին, Հ.Արթինեանը, Ն.Ադոնցը, Ա.Հովհաննիսյանը, Լ.Չորմիս-

---

[1] Фернан Бродель, Материальная цивилизация. Экономика и капитализм XV-XVIII вв., т. 2, М., 2007, էջ 149.

[2] Տես՝ Стать более амбициозными (Успехи армянских купцов обязаны повторить), Эдита Караханян, “Голос Армении”, 12.02.22, https://www.golosarmenii.am/article/165710/stat-bolee-ambicioznymi

յանը, Ի.Կանտը, Ջ.Բ. Տավերնիեն, Ջ.Պ. Տուրնեֆորը, Ջ.Բերշեն և շատ ուրիշներ: Ըստ էության անվիճելի է ներկայանում այն տեսակետը, որ XVI-XIX դդ. հայ վաճառականները մեծ ներդրում են բերել մի շարք տերությունների առևտրի զարգացմանը՝ էապես նպաստելով Արևելքի և Արևմուտքի միջև ապրանքափոխանակությանը: Պատահական չէ Վ.Բայբուրդյանը մեջբերում Ա.Ալպօյաճեանի այն միտքը, թե «Եվրոպացիք հայ վաճառականի ոտքին հետքերուն հետևելով է, որ միայն կրցած են առաջանալ»[1]:

Մեթոդաբանություն: Որպես շարադրման սկզբունք ընտրվել է պատմաքննական վերլուծության մեթոդը:

Վերլուծություն: Դեռ վաղ ժամանակներից սկսած Հայաստանի տարածքը ծառայել է որպես անցուղի միջազգային առևտրափոխանակության համար, հաշվի առնելով աշխարհագրական վերին աստիճանի հարմար դիրքը: Ըստ որում Հայաստանի վրայով կատարվում էր ոչ միայն միջազգային ապրանքափոխանակություն, այլև զուտ հայկական ապրանքների արտահանում և վաճառք:

Տարբեր ժամանակաշրջաններում Հայաստանի մշակութային-տնտեսական վերելքը հիմնականում պայմանավորված է եղել հենց միջազգային առևտրի զարգացմամբ: Սկսած XI դարից հայերը «գործուն կապերի» մեջ են գտնվել Անդրկովկասի, Իրանի, Միջին Ասիայի, Ռուսաստանի, Օսմանյան կայսրության, Հնդկաստանի, Չինաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի, Լեհաստանի, Հունգարիայի և մի շարք այլ երկրների հետ: Վ.Բայբուրդյանը հիշատակություններ է անում այն մասին, որ հայերին հաջողվել է անգամ կտրել Ատլանտյան օվկիանոսն ու հասնել նոր աշխարհ՝ այն ժամանակ դեռ նորահայտ Ամերիկայի մայրցամաք:

Անդրադառնալով նշված երկրներից գրեթե մեծամասնության հետ հայերի ունեցած փոխհարաբերություններին և առևտրական կապերին, հեղինակը առանձնացնում է մի քանի փուլ, ըստ որի էլ կատարում է վերլուծությունը՝ ուշ միջնադարյան հայ վաճառականության դերի մեծացումը միջազգային առևտրում, հայերը և Լևանտյան առևտուրը XVII դարում, միջերկրածովյան առևտրական ճանապարհը և հայ վաճառականների առևտուրը Արևմտյան Եվրոպայի երկրների հետ, իրանահայ խոջաների առևտուրը Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի երկրների հետ XVII դարում և հայերի առևտուրը Հնդկաստանի, հեռավոր Արևելքի և Հարավ-Արևելյան Ասիայի երկրների հետ:

Դեռ Կիլիկյան Հայաստանում հայերը լայնորեն ընդգրկված էին համաշխարհային առևտրի մեջ՝ նշանակալի մասնակցություն ունենալով Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային ապրանքափոխանակությանը: Մոտ երեք դար հայկական նոր պետությունը ահռելի դեր ունեցավ ոչ միայն միջազգային ցամաքային առևտրի, այլև որոշակի չափով ծովային իրավունքի զարգացման գործում: Սակայն Կիլիկիայի անկումից հետո հայերը ստիպված եղան գաղթել աշխարհի տարբեր անկյուններ: Հայկական գաղթավայրերի կարելի էր հանդիպել միջազ-

[1] Այդ մասին ավելի հանգամանալից տես՝ Ա.Ալպօյաճեան, Պատմութիւն հայ գաղթականութեան: Հայերու ցրումը աշխարահի զանազան մասերը, հ.գ, Կահիրե, 1961:

գային տարանցիկ առևտրի հիմնական ուղեգծի բոլոր կարևոր հանգրվաններում, ինչպես օրինակ Ղրիմում, որի հարավ- արևելյան մասը օտարները կոչում էին «Ծովային Հայաստան»՝ հաշվի առնելով տեղանքում հայերի բազմաքանակ և զորեղ լինելը[1], Թավրիզում, որտեղ հայերը կազմում էին մի խոշոր զանգված և ուղղակի կամ անուղղակի կերպով ներգրավված էին համաշխարհային ապրանքափոխանակության մեջ, Կ.Պոլսում, ուր վերջիններս հանդիսանում էին եվրոպական առևտրականների համար պարտադիր միջնորդներ, Հալեպում, ուր գոյություն ուներ բազմամարդ հայ գաղութ իր եկեղեցիներով, սրբատեղիներով, հյուրանոցներով, և այլուր:

Իրար հաջորդող թուրքական նվաճումները Արևմուտքի վաճառականներին զրկել էին փոքր Ասիայի, Սիրիայի ու Հայաստանի վրայով Միջին Արևելքի, Հնդկաստանի ու Չինաստանի հետ առևտրա-տնտեսական կայուն կապեր ունենալու հնարավորությունից: Չդադարող պատերազմների, քաղաքական անկայունության պատճառով Հայաստանի քարավանային ճանապարհների վրա չէր հաջողվում վերականգնել միջազգային առևտրի ծաղկման համար այնքան անհրաժեշտ տեղաշարժվելու անվտանգությունը: Եվրոպան կտրվել էր արևելյան շուկաներից: Փակվել էր նաև հայտնի «մետաքսի ճանապարհը», առևտրական այն մեծ ուղին, որը Միջին Ասիայից և Իրանից, Հայաստանի վրայով տանում էր դեպի Սև ծով: XIV դարում և ավելի ուշ Արևելքի երկրները բազմիցս փորձեր էին կատարում վերականգնելու ընդհատված առևտրական կապերը Արևմուտքի հետ: Ստեղծված խզումը չէր կարող տևական բնույթ կրել և ակնհայտ էր, որ Արևելքի և Արևմուտքի միջև միջնորդ վաճառականների հանդես գալը դառնում էր կենսական անհրաժեշտություն:

Այդ դերը նշանակալից չափով իր վրա վերցրեց վերընթաց զարգացում ապրող հայ առևտրական խոջայական դասը,* որը շուտով ձեռք բերեց այնպիսի կշիռ, որ XVI դարի վերջին և XVII դարի ընթացքում մրցակիցներ չուներ ողջ Լևանտի և Միջին ու Հեռավոր Արևելքի տարբեր երկրների միջև իրագործվող միջմայրցամաքային առևտրի բնագավառում[2]: Չգոհանալով եվրոպացիների ներկայացրած ապրանքների ընտրությամբ՝ հայ վաճառականները շատ հաճախ սկսում էին գործել որպես ինքնուրույն միավոր: Նրանցից շատերը նույնիսկ հաստատվում էին եվրոպական քաղաքներում, գրասենյակներ բացում և հիմնում մասնաճյուղեր[3]:

---

[1] Վ.Բայբուրդյան, Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում, Երևան, 2023, էջ 11-12:

* XIVդ.-ից սկսած հայ «խոջայական» դասը դուրս է գալիս ասպարեզ՝ մրցակցությունից դուրս թողնելով մյուսներին: Անգամ Թուրքիայում, նրանց կոչում էին «խոջա», ինչը թարգմանաբար պարսկերենից նշանակում էր հարուստ, տանուտեր, իշխան, ինչին արժանանում էին առաքինությամբ և առանձնահատուկ մտածելակերպով աչքի ընկնող մարդիկ:

[2] В.А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в 17 веке. (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях), Ереван, 1969.

[3] Լ.Չորմիսյան, Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա.հատոր, Բեյրութ, 1972, էջ 182.

Ակներև է, որ հայերի անսպասելի մուտքը համաշխարհային շուկա զարմացրել էր ժամանակակիցներին: Այդ առիթով Կանտը գրել է. «Մեկ այլ քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ տիրապետում է ինչ-որ առանձնահատուկ բնույթի առևտրական ոգի: Նրանք զբաղվում են փոխանակությամբ, հետիոտն ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեական ափի Կորսո հրվանդանը: Դա վկայում է այդ խելամիտ ու աշխատասեր ժողովրդի առանձնահատուկ ծագման մասին, որը հյուսիս-արևելքից հարավ-արևմուտքի ուղղությամբ կտրում անցնում է համարյա ողջ հին աշխարհը և կարողանում է սիրալիր ընդունելություն գտնել այն բոլոր ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում է այցելությամբ»[1]:

Աստիճանաբար Արաքսի ձախ ափին տեղավորված հայ քաղաքները վերածվում էին միջազգային տարանցիկ քարավանային հանգուցակետերի, հատկապես Ջուղան: Այն դարձել էր մի մեծ կայան Արևելքի շուկաները Արևմուտքի հետ կապող ճանապարհի վրա, ապրանքների մի մեծ պահեստանոց: «Չգիտենք, թե ինչ էր նրա անցյալը խոր հնության մեջ, - գրում է Լեոն, - բայց XV-XVI դարերից նա սկսում է փայլել հայ երկնակամարի վրա իբրև հայրենիք զարմանալի վաճառականների, որոնք ոչ միայն հետաքրքրական էջեր են մտցնում միջազգային առևտրի պատմության մեջ, այլև հանդիսանում են մի շատ խոշոր, նմանը չունեցող հասարակական – կուլտուրական տարր, որի կատարած դերը հայ կյանքի զարգացման մեջ անհունապես մեծ է»[2]: Հաղորդակցության հարմարավետության հետ մեկտեղ ջուղայեցիները առևտրի համար նպաստավոր պայմաններ ստեղծելու շնորհք ունեին: «Ասիական սանձարձակ բարբարոսությունների կրկեսում խաղաղ կուլտուրական աշխատանքի իրավունքներ ձեռք բերելը ավելի խոշոր մեծագործություն էր, քան քարավաններով Հիմալայներից մինչև Եվրոպա չափելը: Այս մեծ նվաճումը ջուղայեցին անում էր ոչ թե, իհարկե, զենքի զորությամբ, այլ խելքով, ճարպկությամբ, հենված իր ամենամեծ ուժի՝ դրամի վրա»[3]:

Այնուհանդերձ փոքր Ասիայի վրայով անցնող առևտրական ճանապարհների վրա օսմանցիների սահմանած հսկողության հետևանքները ահռելի էին: Հետաքրքրական է, որ եվրոպական տերությունները հակաթուրքական զինակցություն փնտրելու ճանապարհին որպես իրենց բնական դաշնակից դիտարկում էին Իրանին: Սեֆյան Իրանի ներկայացուցիչներն էլ իրենց հերթին, որպես քրիստոնյա դիվանագիտական գործակալների, ավելի հաճախ դիմում էին իրանահայ վաճառականներին: Իսկ եվրոպացիք՝ հայ վաճառականների ծառայություններին՝ Սեֆյանների հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու նպատակով: Ու թեև իրանա-եվրոպական քաղաքական դաշինք չկնքվեց, այդուհանդերձ հայ վաճառականները բանակցությունների շնորհիվ ծանոթանում էին

---

[1] И.Кант, Сочинения, т.6, М., 1966, с.572-573

[2] Լեո, Երկերի ժողովածու, 3-րդ հատոր, Երևան, 1969, էջ234-235:

[3] G.Noradounghian, Recueil d'actes Inernationaux de l'Empire Ottoman, T.I, Paris, 1897(մեջբերումը ըստ Վ.Բայբուրդյանի, Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում, Երևան, 2023, էջ 23-24):

Եվրոպայում ընդունված առևտրի ձևերի հետ, համագործակցության մեջ մտնում եվրոպական առևտրական ընկերությունների ու վարկավորող հաստատությունների հետ, իրենց առևտրական գործառնությունների ծավալման համար կապեր հաստատում եվրոպական պետությունների կառավարող շրջանների հետ:

Բայց և այնպես, ցանկանալով միջազգային առևտրի կենտրոնը Ջուղայից, որը հայկական աղբյուրներում հաճախ անվանում էին «պարծանք Հայոց ազգիս», տեղափոխել Իրան, Շահը ձեռնամուխ է լինում հայերի մեծ բռնագաղթի: Նրա հրամանով 1604թ.-ին Ջուղայի ու հարակից բնակավայրերի արտադրող և բարձր մշակույթ ունեցող հայությունը բռնի ձևով տեղափոխվում է Պարսկաստան: Հայերի զանգվածային բռնագաղթի նպատակը ոչ միայն ռազմաստրատեգիական ու քաղաքական էր՝ անապատի վերածել այն տարածքները, որոնցով անցնելու էր թուրքական բանակը, ինչպես նաև թուլացնել պետության ոչ իրանական էթնոս ունեցող շրջանները, այլև տնտեսական: Բռնագաղթած հայերին բնակեցնելով մեծամասամբ Իրանի նոսր բնակչություն ունեցող կենտրոնական շրջաններում, շահ Աբբաս 1-ը շատ լավ հասկանում էր, որ հայ առևտրական և արհեստավորական դասի օգնությամբ կարելի էր զարկ տալ երկրի ճգնաժամի մեջ գտնվող տնտեսությանը և մասնավորապես ծաղկեցնել լճացում ապրող երկրի արտաքին առևտուրը: Հենց այդ նպատակով, 1605 թ. -ին հատուկ հրովարտակով Շահը մի ընդարձակ տարածություն հատկացրեց ջուղայեցիներին՝ բնակավայր կառուցելու համար, որն էլ հետագայում ստացավ Նոր Ջուղա անվանումը: Այն շատ արագ վերածվեց գաղութային հայ կապիտալի ամենամեծ ու ամենաուժեղ կենտրոնի՝ գրեթե մի ամբողջ դարի ընթացքում: Եվ թեև տարիներ անց, այնտեղ բնակություն հաստատեցին տարբեր անվանի վաճառականներ, այնուհանդերձ «հայ խոջայական դասը» շարունակում էր մնալ ընտրանիի կարգավիճակում՝ օժտված լինելով քաղաքական և իրավական բնույթի մի շարք լայն առանձնաշնորհումներով, ընդհուպ մինչև իր ազգային ու կրոնական առանձնահատկությունները պահպանելու ու զարգացնելու իրավունքը, մի հանգամանք, որն ըստ էության տարօրինակ երևույթ էր մահմեդական մի երկրի համար[1]: Նոր Ջուղային տրամադրվել էր նաև ինքնավարության իրավունք, այդ թվում նաև առանց իրանական իշխանությունների միջամտության քալանթար(քաղաքապետ) ընտրելու իրավասություն: Հայերին, ինչպես նշում է Բայբուրդյանը, իրավունք էր վերապահված դատական վեճերը լուծել տեղում, այսպես կոչված գլխավոր դատավորի կողմից, որը սովորաբար ընտրվում էր համայնքի ազդեցիկ վաճառականներից: Հային սպանողը դատապարտվում էր մահվան: Պատահական չէին շահի խոսքերն առ այն, որ «մեկ հայն ինձ վճարում է ավելի շատ հարկեր, քան տասը մահմեդականը»: Ըստ էության, կարելի է ասել, որ հայերը վերցվում էին պետական հովանավորության տակ, մի բան, որին չարժանացան Անդրկովկասից բռնագաղթած ոչ վրացիներն և ոչ էլ հրեաները: Վերջիններս, ինչպես նաև պարսիկները, ներգրավված էին ներքին առևտրում և շատ հազվադեպ էին մեկնում եվրոպական երկներ: Շահի

[1] R.W.Ferrier, The Armenians and the East India Company in Persia in the Seventeenth and Early Eighteenth Century.- Economic History Review, 2nd Series, XXVI, 1973, p.40.

բազմաթիվ փորձերը նրանց ներգրավելու նաև արտաքին առևտրի մեջ չտվեցին ցանկալի արդյունքներ և չարդարացրին նրա հույսերը: Նույնիսկ շահի հպատակ բազմաթիվ վաճառականներ Եվրոպայում մետաքսի վաճառքից հետո այլևս չէին վերադառնում Իրան, դրամը վատնելով կանանց վրա և վարելով ցոփ ու շվայտ կյանք: Այսպիսով շահական կառավարության և հայ առևտրական դասի միջև ստեղծվում է շահերի միասնություն, մի տեսակ դաշինք, որը ձեռնտու էր երկու կողմերին:

XVI դ. սկզբից Եվրոպայում մետաքսյա կտորեղենի արտադրությունը հասել էր այնպիսի չափերի, որ տեղում արտադրվող հումքը այլևս չէր բավարարում, և հարկ եղավ այն ներմուծել Արևելքից, հատկապես Իրանից՝ որպես հում մետաքսի արտադրության խոշորագույն կենտրոններից մեկը: Լևանտը այն հիմնական շուկան էր, որի վրայով պարսկական մետաքսը տեղափոխվում էր եվրոպական երկրներ:

Հնագույն ժամանակներից սկսած Լևանտը միջազգային առևտրափոխանակության կարևորագույն հանգույցներից էր: Թուրքիայի վրայով անցնող ավանդական առևտրական ճանապարհով, որը ձգվում էր դեպի Միջերկրական ծովի արևելյան ափերը՝ Լևանտյան առևտրի խոշորագույն կենտրոնները, 15-րդ դարի վերջերից առևտուր էին անում գերազանցապես հայ վաճառականները: Հայաստանի, Իրանի, Սիրիայի, Եգիպտոսի և այլ գաղթավայրերի հայ առևտրականները ըստ էության դարձել էին Իրանի վրայով անցնող տարանցիկ ցամաքային ճանապարհի բացարձակ տերերը: Ուշագրավ է որ հայերը գործում էին ոչ միայն որպես եվրոպացիների առևտրական գործակալներ, այլև որպես եվրոպացիների թարգմանիչներ, քանի որ նրանցից շատերը տիրապետում էին մի քանի լեզուների[1]:

Լևանտյան առևտրում մեծ դեր են ունեցել Հալեպը, Թավրիզը, Զմուռնիան, Վանը, Կ.Պոլիսը, Բուրսան և այլն: Անդրադառնալով այդ տեղանքներից յուրաքանչյուրում հայ վաճառականների ունեցած դերին, Բայբուրդյանի նկատառումներից ակնհայտ է դառնում, որ թեև հայերը հաջողել են հիմնադրել լուրջ առևտրական գրասենյակներ, կատարել խոշոր գործարքներ և ունենալ մենաշնորհներ (մասնավորապես իրանական հում և մշակված մետաքսի գնման և վաճառահանման դաշտում), այնուհանդերձ Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող բռնապետական վարչակարգն ու անկշտում ու գիշատիչ թուրքական իշխանությունները, ինչպես նաև եվրոպական տերությունների՝ մասնավորապես Անգլիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի և Վենետիկի հետ ունեցած քաղաքական և առևտրական հակամարտությունները, ահռելի խոչընդոտ են հանդիսացել հայ առևտրական բուրժուազիայի զարգացման համար: Վերջինիս վառ օրինակ է Հալեպում՝ Հոլանդիայի առևտրական ներկայացուցիչ, ողջ Սիրիայի մաքսապետ, մետաքսի վաճառքի մենաշնորհին տիրող, բանսարկության և ընչաքաղցության զոհ դարձած մեծահարուստ հայ խոջա Պետիկի գլխատումը: Պակաս խոչընդոտներ չեն ստեղծել հայերի համար անգլիացիք, որոնք մետաքսի արտահանման

[1] Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Եր., 1967, էջ 403 (մեջբերումը ըստ https://hetq.am/hy/article/31209):

գործում վերջիններիս համարելով լուրջ մրցակից, ի վերջո ընտրում են թրքասիրությունը: Հիմնադրելով այսպես կոչված «Լևանտյան կամ թե թյուրքական ընկերություն», սեփական կառավարությանը ճնշելու գնով նրանք ստիպում են վերջինիս ետ կանգնել Իրանի հետ հակաթուրքական դաշինքի կնքումից, ընդհուպ մինչև անգլիական նավերի օգտագործման արգելքը թուրքերի դեմ: Ավելին, Եվրոպայում մեծ հռչակ վայելող Թոմաս Շիրլինը ձերբակալվում և Թաուերի բանտ է նետվում իր հայտնի «Դատողություններ թուրքերի մասին» պամֆլետում «բարեկամ Թուրքիայի դեմ հակաթուրքական քարոզի համար»[1]:

Ողջ հարյուրամյակի ընթացքում անգլիացիները փորձում էին հայ վաճառականների ձեռքից խլել մետաքսի արտահանման նրանց մենաշնորհը և սահմանափակել վերջինիս արտահանումը դեպի Լևանտ: Այնուհանդերձ նրանց քաղաքականությունը, թեև բավականին վնասներ հասցրեց հայ առևտրականներին, բայց և ճեղքվածք տվեց ու ձախողեց: Հետագայում Ստամբուլում անգլիական առևտրական ներկայացուցիչը պիտի խոստովաներ, որ այդ քաղաքում, որտեղ անգլիական առևտրական հիմքերը առավել կայուն էին, հում մետաքսի առևտուրը գտնվում է առավելապես հայ վաճառականների ձեռքում: Ըստ որում հայ վաճառականների առևտուրը Լևանտի հետ չէր սահմանափակվում հում մետաքսով: Նրանք իրենց ճարտարությունը ցուցաբերում էին տնտեսության տարբեր ոլորտներում: Գտնվեցին նաև առևտրականներ, ովքեր եվրոպական սարքավորումներ, մեքենաներ փոխադրեցին երկիր և տեղում սկսեցին կազմակերպել եվրոպական որակ և արտաքին տեսք ունեցող ապրանքների արտադրություն[2]: Հայերը Լևանտի առևտրական կենտրոններն էին հասցնում թանկարժեք քարեր, բուսական ներկեր, գորգեր, մորթիներ, պղպեղ, քրքում, շաֆրան, ծծումբ, ընկույզ, բրինձ, ծխախոտ, մարմար, ափիոն, գինի, չորացած մրգեր, բամբակ, ուղտեր, մանր եղջերավոր անասուններ և այլն: Իսկ Լևանտից Արևելք՝ ապակեղեն, թուղթ, շաքար, վենետիկյան կերպասներ, հայելիներ, ակնոց, ժամացույցներ, թավշե կտորեղեն, պերճանքի զանազան առարկաներ, դրամ և բազմապիսի այլ ապրանքներ[3]: Սակայն հայ վաճառականների քարավանները ապահովագրված չէին կողոպուտներից, իսկ հաճախ նաև ոչնչացումից: Ինչպես նշում է Ջ.Բ. Տավերնիեն իր «Վեց ճանապարհորդություն դեպի Թուրքիա, Պարսկաստան և Հնդկաստան» աշխատության մեջ,– «Ողջ Թուրքիան լի է ավազակներով, որոնք թափառում են խոշոր խմբերով և ճանապարհներին դարանակալում են հայ վաճառականներին: Եթե հանդիպում են հարուստ վաճառականներ, կողոպտում են նրանց և հաճախ զրկում են նաև կյանքից»[4]: Իրենց առևտրական ուղևորությունները քիչ թե շատ հեշտացնելու և անվտանգ դարձնելու համար հայ վաճառականների համար

---

[1] Վ.Բայբուրդյանի, Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում, Երևան, 2023, էջ 92:

[2] Ա.Աստոյան, Հայերն օսմանյան տնտեսության մեջ (հայերն առեւտրի եւ արդյունաբերության բնագավառում), «Հետք», 19.10.2009:

[3] G.Berchet, La Republica di Venezia e la Persia, Torino, 1865, pp. 62-66.

[4] J.B.Tavernier, Les six voyages en Turquie, en Perse et aux Indes, v.1, Paris, 1692, p.78.

1685թ.-ին կազմվում է Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովը»* կամ «Վասն նորահաս մանկանց և երիտասարդ վաճառականաց խրատ» աշխատությունը՝ որն իրենից ներկայացնում է ուսումնական մի ձեռնարկ սկսնակ վաճառականների համար: Նրանում ընդարձակ տեղեկություններ էին տրվում տարբեր երկրներում գործածվող չափ ու կշռի համակարգերի, կիրառվող դրամական միավորների և այլնի մասին: Անվարան կերպով կարելի է ասել, որ այն հանդիսանում է 17-րդ դարում համաշխարհային առևտրի և նրանում հայերի մասնակցության վերաբերյալ լավագույն սկզբնաղբյուրներից մեկը[1]: Հարկ է նշել, որ Ջուղայեցու ջանքերով Նոր Ջուղայում բացվել էր առևտրական մի դպրոց, որն իր գոյության ընթացքում տվել էր 250 շրջանավարտ: 1695թ.-ին Ամստերդամում՝ Թովմա Վանանդեցու կողմից, հրատարակվում է «Համատարած աշխարհացույց» քարտեզը, իսկ 1696թ.-ին այդ քարտեզի բացատրությունը, որոնք պիտի ծառայեին նախ և առաջ որպես ուսումնական ձեռնարկ Հայաստանում հիմնվելիք համալսարանի համար: Հետաքրքրական է, որ Եվրոպան, Ասիան և Աֆրիկան չափող հայ վաճառականները իրենց ճանապարհորդությունների ժամանակ պահել են օրագրեր (դավթարներ), որտեղ մեկ առ մեկ գրանցել են տարբեր վայրերով անցնող առևտրական ճանապարհների հետ կապված մանրամասնությունները, ինչպես օրինակ վաճառականներից գանձվող հարկատեսակները և այլն, որոնք հետագայում մյուսների համար ծառայել են որպես ուղեցույց: Ըստ որում, վերջիններս աչքի են ընկել զարմանալի ճշգրտությամբ ու հավաստիությամբ: Պատահականորեն չեն համաշխարհային առևտրի պատմության հարցերի գիտակները հայ վաճառականներին որակելով որպես «նախաձեռնող» և «խիզախ», նկատել, թե «Այս հայերը ինչպես իրենց, այնպես էլ Ջուղայի վաճառականների համար աշխատելիս, անխոնջ են ուղևորությունների ժամանակ և արհամարում են եղանակների խստությունները: Շատերին ենք տեսել, նույնիսկ ամենահարուստների, որ ոտքով անցնում էին գետերով, մինչև պարանոցը խրված ջրի մեջ, փրկելու համար իրենց և բարեկամների հակերը…: Այս ազնիվ մարդիկ երբեք չեն փոխում իրենց վարվելակերպը, միշտ նույնն են, խույս են տալիս աղմկահարույց օտարականներից և հարգում նրանց, ովքեր խաղաղ են. սիրով պատսպարում և կերակրում են նրանց… երբ լուր են ստանում որևէ քարավան անցնելու մասին, գինով և խմիչքներով մեկ-երկու օրվա ճանապարհ ընդառաջ են գնում իրենց հայրենակիցներին»[2]:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ հայ վաճառականի տեսակը, թե իր մտավոր ունակություններով և թե իր մարդկային որակներով առանձնանում էր մյուս բոլորից, և ժամանակ առ ժամանակ աշխարհի տարբեր անկյուններում՝

---

* Այդ մասին հանգամանալից տես՝ Աշխարհաժողով/Կոստանդ Ջուղայեցի; Աշխատասիրությամբ Ս.Բալդարյանի, Եր., Մատենադարան, 2021:

1 Վ.Բայբուրդյանի, Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում, Երևան, 2023, էջ 100:

2 Նույն տեղում, էջ 102: Հարցի մասին ավելի հանգամանալից տես՝ Հ. Արթինյան, Նոր Ջուղայեցի հայերուն առևտուրը ԺԷ. Դարուն, «Անահիտ», 1908, Tournefort J.P., Relation d'un voyage du Levant, Paris, t.2

ստեղծելով մեծ ու փոքր գաղութներ, վերածվում մեծ ռեսուրսի՝ նշանակալի ազդեցություն գործելով Արևելքի և Արևմուտքի միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման վրա:

Ի՞նչն է խանգարում մեզ լինել այդպիսին այսօր…

Հոդվածի շարունակությունը ժողովածուի հաջորդ համարում:

Գիտական նորույթ: Հոդվածում ներկայացնելով հայ վաճառականության առևտրա փոխանակության ոլորտում կուտակած ահռելի փորձը, նախանշվում են ուղիներ օգտվելու պատմության դասերից և կիրառելու այն ցանցային համակարգը, որը դարեր առաջ արդյունավետ ձևով կիրառել է հայ վաճառականությունը:

Եզրակացություն: Զրկվելով իրենց քաղաքներից ու գյուղերից, հողերից, ճորտերից ու հարկատուներից հայ ավատատերերից շատերը գաղթելով երկրից ձուլվել են եկվոր նվաճողների մեջ կամ ոչնչացել ի սպառ: Նրանց մի մասը առևտրական զբաղմունքների մեջ որոնել է անձնական ապահովությունը ու բարեկեցության երաշխիքը: Եղել են նաև այնպիսիք, որոնք ասպետական զրահն ու սուրը փոխել են եկեղեցական փիլոնի ու բուրվառի հետ: Այնուհանդերձ, ենթարկվելով անթիվ ու անհամար զրկանքների, հայ վաճառականությունը հաջողել է դառնալ կապող օղակ Արևելքի և Արևմուտքի միջև՝ նոր թափ հաղորդելով առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը: Նման անսպասելի ուժեղացման պատճառները բազմապիսի ու բազմազան էին. հայերի նկատմամբ հալածանքների ու ֆիզիկական բնաջնջման վաղեմի քաղաքականությունը չէր դադարել, նրանց հողերը անցել էին թուրքական քոչվորական ու կիսաքոչվորական ցեղերի վերնախավի ձեռքը, հայ աշխարհիկ ավատատերերը, որպես քաղաքական ուժ դուրս էին մղված պատմական ասպարեզից և ստիպված էին զբաղվել առևտրով: Եվ հիրավի, – ինչպես նկատում է Լեոն, –Արևելքի բռնատիրության պայմաններում, առևտուրը միակն էր, որ բաց էր մնում հայի առջև այս աշխարհի մեջ փառքի ու վայելքի, իսկ որոշ չափով էլ տիրապետության հնարավորության համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան: Հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, հ.գ, Կահիրե, 1961, 507 էջ:
2. Աշխարհաժողով/Կոստանդ Ջուղայեցի; Աշխատասիրությամբ Ս.Բալդարյանի, Եր., Մատենադարան, 2021, 216 էջ: https://arar.sci.am/dlibra/publication/296856/edition/272408/content
3. Աստոյան Ա., Հայերն օսմանյան տնտեսության մեջ (հայերն առևտրի և արդյունաբերության բնագավառում), «Հետք», 19.10.2009:
4. Բայբուրդյան Բ., Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում, Երևան, 2023, 299 էջ:

5. Բայբուրդյան Վ., Իրանահայերի մասնակցությունը իրանա-եվրոպական հա-կաթուրքական հակաթուրքական դաշինք ստեղծելու փորձերում (16-17դդ), ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններ» ամսագիր, 1984, N9.
6. Լեո, Երկերի ժողովածու, 3-րդ հատոր, Երևան, 1969, 510 էջ:
7. Լեո, Խոջայական կապիտալ, h1,Երևան,1934:
8. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան,1959, 695 էջ:
9. Նոր Ջուղայեցի հայերուն առևտուրը ԺԷ. Դարուն, Արթինյան Հ., «Անահիտ», 1908 (https://arar.sci.am/dlibra/publication/74254/edition/67120/content)
10. Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա.հատոր, Բեյրութ, 1972, 750 էջ:
11. Байбуртян В.А., Армянская колония Новой Джульфы в 17 веке. (Роль Новой Джульфы в ирано европейских политических и экономических связях), Ер., 1969.
12. Кант И., Сочинения, т.6, М., 1966, 743с.
13. Стать более амбициозными (Успехи армянских купцов обязаны повторить), Эдита Караханян, “Голос Армении”, 12.02.22. https://www.golosarmenii.am/article/165710/stat-bolee-ambicioznymi
14. Фернан Бродель: Материальная цивилизация, экономика и капитализм XV-XVIII вв., т. 2, М., 2007, 672 էջ.
15. Berchet G, La Republica di Venezia e la Persia, Torino, 1865. https://www.gutenberg.org/files/34352/34352-h/34352-h.htm)
16. Ferrier R.W., The Armenians and the East India Company in Persia in the Seventeenth and Early Eighteenth Century.- Economic History Review, 2nd Series, XXVI, 1973.
17. Tavernier J.B., Les six voyages en Turquie, en Perse et aux Indes, v.1, Paris, 1692.

References

1. Alpo'yatwean A., Patmowt'iwn hay gaght'kanowt'ean: Hayerow crowmy' ashxarahi zanazan masery', h.g, Kahire, 1961, 507 e'j:
2. Ashxarhajhoghov/Kostand Jowghayeci; Ashxatasirowt'yamb S.Baldaryani, Er., Matenadaran,2021,216e'j: https://arar.sci.am/dlibra/publication/296856/edition/272408/content
3. Astoyan A., Hayern o'smanyan tntesowt'yan mej (hayern ar'ewtri ew ardyownaberowt'yan bnagavar'owm), «Hetq», 19.10.2009:
4. Baybowrdyan B., Hamashxarhayin ar'&towry' & hay vatwar'akanowt'yowny' XVII darowm, Er&an, 2023, 299 e'j:
5. Baybowrdyan V., Iranahayeri masnakcowt'yowny' irana-evropakan hakat'owrqakan hakat'owrqakan dashinq steghc'elow p'ord'erowm (16-17dd), GA «Lraber hasarakakan gitowt'yownner» amsagir, 1984, N9.
6. Leo, Erkeri jhoghovac'ow, 3-rd hator, Er&an, 1969, 510 e'j:
7. Leo, Xojayakan kapital, h1,Er&an,1934:

8. Hovhannisyan A., Drvagner hay azatagrakan mtqi patmowt'yan, girq erkrord, Er&an,1959, 695 e'j:
9. Nor Jowghayeci hayerown ar'&towry' JhE'. Darown, Art'inyan H., «Anahit», 1908 (https://arar.sci.am/dlibra/publication/74254/edition/67120/content)
10. Chormisyan L., Hamapatker ar&mtahayoc me'k darow patmowt'ean, A.hator, Beyrowt', 1972, 750 e'j:
11. Bajburtjan V.A., Armjanskaja kolonija Novoj Dzhul'fy v 17 veke. (Rol' Novoj Dzhul'fy v irano evropejskih politicheskih i jekonomicheskih svjazjah), Er., 1969.
12. Kant I., Sochinenija, t.6, M., 1966, 743s.
13. Stat' bolee ambicioznymi (Uspehi armjanskih kupcov objazany povtorit'), Jedita Karahanjan,"GolosArmenii",12.02.22. https://www.golosarmenii.am/article/165710/stat-bolee-ambicioznymi
14. Fernan Brodel': Material'naja civilizacija, jekonomika i kapitalizm XV-XVIII vv., t. 2, M., 2007, 672.
15. Berchet G, La Republica di Venezia e la Persia, Torino, 1865. https://www.gutenberg.org/files/34352/34352-h/34352-h.htm)
16. Ferrier R.W., The Armenians and the East India Company in Persia in the Seventeenth and Early Eighteenth Century.- Economic History Review, 2nd Series, XXVI, 1973.
17. Tavernier J.B., Les six voyages en Turquie, en Perse et aux Indes, v.1, Paris, 1692.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լիանա Կառլենի Հարությունյան

Համառոտագիր: Արդիականությունն ու նպատակը: Դեռ վաղ ժամանակներից սկսած Հայաստանի տարածքը ծառայել է որպես անցուղի միջազգային առևտրափոխանակության համար, հաշվի առնելով աշխարհագրական վերին աստիճանի հարմար դիրքը: Հայաստանի վրայով կատարվում էր ոչ միայն միջազգային ապրանքափոխանակություն, այլև զուտ հայկական ապրանքների արտահանում և վաճառք:

Ժամանակ առ ժամանակ ենթարկվելով բռնագաղթման և հիմնելով գաղթավայրեր միջազգային տարանցիկ առևտրի հիմնական ուղեգծի բոլոր կարևոր հանգրվաններում՝ հայ վաճառականները հաջողել են ստեղծել ժամանակաշրջանի ամենանշանավոր առևտրական համաշխարհային ցանցերից մեկը: Գործելով համատեղ և ամենուր վայելելով անբասիր հեղինակություն, նրանք մեծ ավանդ են բերել մի շարք տերությունների առևտրի զարգացմանը՝ էապես նպաստելով Արևելքի և Արևմուտքի միջև ապրանքափոխանակությանը: Վահան Բայբուրդյանի «Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում» աշխատությունը մի հսկայական փաստական նյութերի գանձարան է, որի ուսումնասիրությունը թույլ է տալիս պատմության դասերից օգտվելու ուղիներ

նախանշել և կիրառել այն ցանցային համակարգը, որը դարեր առաջ արդյունավետ ձևով կիրառել է հայ վաճառականությունը:

Խնդիր է դրվել ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի հայ վաճառականների գործունեությունը աշխարհի տարբեր գաղթօջախներում, վեր հանել այն էթիկական և բարոյական սկզբունքները, որով նրանք առաջնորդվել են՝ ապահովելով իրենց ուրույն տեղը համաշխարհային առևտրի հորձանուտում:

Մեթոդաբանություն: Որպես շարադրման սկզբունք ընտրվել է պատմաքննական վերլուծության մեթոդը:

Գիտական նորույթ: Հոդվածում ներկայացնելով հայ վաճառականության առևտրա փոխանակության ոլորտում կուտակած ահռելի փորձը, նախանշվում են ուղիներ օգտվելու պատմության դասերից և հնարավորինս կիրառելու միասնական գործելակերպի արդյունավետ համակարգը:

Բանալի բառեր. ապրանքափոխանակություն, միջազգային անցուղիներ, առևտրատնտեսա կան հարաբերություններ, միջնորդ, բանակցություններ, նյութական կարողություն, գաղթավայրեր, տնտեսական համագործակցություն, համաշխարհային շուկա, մենաշնորհ:

МИРОВАЯ ТОРГОВЛЯ И АРМЯНСКОЕ КУПЕЧЕСТВО

Лиана Карленовна Арутюнян

Аннотация. Актуальность и цель статьи. С давних времен территория Армении служила вратами для международной торговли, учитывая ее выгодное географическое положение. Через Армению осуществлялась не только международная торговля, но и экспорт и продажа исконно армянских товаров. Время от времени подвергавшиеся гонениям и основавшие поселения на всех важных перекрестках основного пути международной транзитной торговли, армянские купцы сумели создать одну из самых значительных мировых торговых сетей данного периода. Действуя сообща и пользуясь повсюду безупречной репутацией, они в значительной степени способствовали развитию торговли ряда империй, значительно облегчая товарный обмен между востоком и западом. Работа Ваана Байбурдяна «Мировая торговля и армянская купечество в XVII веке» представляет собой огромную сокровищницу фактического материала, изучение которого позволяет наметить пути использования уроков истории и применения той сетевой системы, которую эффективно использовали армянские купцы столетия назад.

Задачи. В статье предпринята попытка представить деятельность армянских купцов данного периода в разных колониях мира, осветить этические и моральные принципы, которыми они руководствовались, обеспечив себе уникальное место в мировой торговле.

Методология. Применен метод историко-критического анализа.

Научная новизна. В статье представлен огромный опыт, накопленный армянскими купцами в области торговли и обмена, намечены пути использования

уроков истории и максимально возможного применения эффективной системы унифицированных практик.

Ключевые слова: торговля, международные пути, торгово-экономические отношения, посредник, переговоры, материальные блага, колонии, экономическое сотрудничество, мировой рынок, монополия.

WORLD TRADE AND ARMENIAN MERCHANTS

Liana Karlen Harutyunyan

Abstract. Relevance and purpose of the article. Since ancient times, the territory of Armenia has served as a gateway for international trade, given its favorable geographical position. Through the territory of Armenia, not only international trade was carried out, but also the export and sale of purely Armenian goods. Expelled from time to time and establishing settlements at all important stops on the main route of international transit trade, Armenian merchants managed to create one of the most significant world trade networks of their period. Acting in unison and enjoying an impeccable reputation everywhere, they greatly contributed to the development of trade of a number of empires, greatly facilitating the exchange of goods between East and West. Vahan Bayburdyan's work "World Trade and Armenian Merchants in the 17th Century" is a huge treasury of factual material, the study of which allows us to outline ways of utilization of the history lessons and apply the network system that was effectively used by Armenian merchants centuries ago.

The problem. In the scope of the article, an attempt was made to present the activities of the Armenian merchants of that period in different colonies of the world, highlight the ethical and moral principles that guided them, securing a unique place for themselves in the world trade industry.

Methodology. The method of historical-examination analysis was chosen as the principle of the research.

Scientific novelty. The article presents the vast experience accumulated by Armenian merchants in the field of trade and exchange, outlines the ways to use the lessons of history and the maximum possible application of an effective system of unified practices.

Keywords: trade, international routes, trade and economic relations, intermediary, negotiations, material goods, colonies, economic cooperation, world market, monopoly.